



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆԿԻՐՎՈՒՄ Է
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ
ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
20-ԱՄՅԱԿԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ
Ճայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց

«ՄԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ
ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՆՔ»

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ ԵՎ
ՊԱՏԳԱՄՆԵՐ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎԾԻՆ
2020

ՀՏԴ 27-475.5
ԳՄԴ 86.37
Ն 936

*Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի*

*Կազմեց՝
Սևակ սրկ. Գրիգորյան
Խմբագիր՝
Տ. Թովմա վրդ. Խաչատրյան*

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք
և Կաթողիկոս Ամենայն Հայոց**

Ն 936 «Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք»: ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԽՈՍԹԵՐ ԵՎ ՊԱՏԳԱՄՆԵՐ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ /
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և
Կաթողիկոս Ամենայն Հայոց; Կազմ.՝ Սևակ սրկ. Գրի-
գորյան; Խմբ.՝ Տ. Թովմա վրդ. Խաչատրյան.– Ս. Էջ-
միածին: ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակ, 2020. –
48 էջ:

ՀՏԴ 27-475.5
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-59-250-3

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սիրելի՛ երիտասարդներ,

Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորման Կենտրոնական գրասենյակը, հաշվի առնելով հոգևոր գրականության կարևորությունը երիտասարդաց հոգևոր կյանքի առաջընթացի ապահովման համար, գնահատելով առկա հոգևոր կարիքը, ինչպես նաև «Երիտասարդի աղոթագիրք» աղոթից ժողովածուի մեծ արձագանքը թե՛ Հայրենիքում և թե՛ սփյուռքում, ընդլայնում է հրատարակվող գրականությունը՝ առավել նպաստելով ձեր հոգևոր սպառազինությանը:

Հիշյալ հրատարակությունը՝ նվիրված Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակին, կազմված է Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի քարոզներից և պատգամներից՝ միտված երիտասարդների հոգևոր ու ազգային հոգեկերտվածքի առավել պայծառեցմանն ու զորացմանը:

Սույն ժողովածուն բաժանված է թեմաների՝ երիտասարդություն, ընտանիք, հայրենիք, բանակ և այլն, որոնք առանցքային են Վեհափառ Հայրապետի քարոզներում:

Ցանկանում եմ հայտնել մասնավոր գնահատանքս ՀԵՀԵՄ հոգևոր տեսչի նախկին օգնական՝ Սևակ սարկավազ Գրիգորյանին հերթական աղյուսավետ համագոր-

ծակցության և սույն աշխատությունը պատրաստելու և կազմելու համար:

Լիահույս եմ, որ վերոնշյալ գրքույկը իր նպաստը կբերի Հայ Եկեղեցու հավատավոր երիտասարդների՝ ձեր հոգու սյուններն ամրացնելու և մեր սրբազան հայրենիքը ավելի շենացնելու գործում:

Որդիական երախտագիտությունս և շնորհավորանքներս եմ հայտնում Վեհափառ Հորը՝ մշտական հայրախնամ հոգածության և օրհնության համար թե՛ հայրենիքի, թե՛ հայ ժողովրդի և թե՛ մասնավորաբար հայ երիտասարդի ու ՀԵՅԵՄ Կենտրոնական գրասենյակի նկատմամբ:

Տեր Հիսուս Զրիստոսի սերն ու շնորհները թող լինեն բոլորի հետ.ամեն:

*Թովմա վարդապետ Խաչատրյան
ՀԵՅԵՄ հոգևոր տեսուչ և
Կենտրոնական գրասենյակի տնօրեն*

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

*Ուղիղ են այն երիտասարդի ճամփաները,
որ մաքրությամբ է ընթանում:
(Առակներ 20:11)*

Մարդու կյանքը՝ ծնունդից մինչև մահ, լեցուն է սիրով ու սպասումներով, հույսերով ու հույզերով, ինչպես նաև բազում խոհերով ու տարատեսակ խնդիրներով: Անցյալի ու ներկայի խաչմերուկում՝ ապագան կերտող մարդն ազատ է ընտրելու իր ճանապարհն ու կերտելու իր ապագան:

Երիտասարդությունն ապրելու, արարելու և ապագա կերտելու ամենաբեղուն շրջանն է: Հենց այս շրջանում է անհրաժեշտ ուղենշել ճանապարհի հետագա ընթացքը՝ հասկանալու մեր անձերի առաքելությունն այս աշխարհում: Լինելով Աստծո որդիներ ու լինելով կյանքի ամենաեռուն շրջանում, պետք է ամեն ջանք գործադրենք իմաստավորելու մեր կյանքն ու մեզ շրջապատող աշխարհը: Ապրումակցելու կարողությունն ունենանք ու մեր ներուժը ներդնենք հանուն հանրային շահի: Ունենանք իմաստությունը գիտենալու, որ երիտասարդներիս ձեռքում է մեր վաղվա օրը, Հայրենիքի և Եկեղեցու ապագան:

Հայ Երիտասարդությունը Հայ Եկեղեցու շուրջը համախմբող կառույցը, որը բացի աստվածսիրությունից նրանց հոգում սերմանում է և հայրենասիրություն, Հայ Եկեղեցին է՝ իր Երիտասարդական Միավորման Կենտրոնական գրասենյակով: Վեհափառ Հայրապետի հայրական տնօրինությամբ պատիվ եմ ունեցել մի քանի ամիս իմ ծառայությունը բերելու ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակին՝ առավել հաղորդակից լինելով երիտասարդների ապրումներին, ինչպես նաև միավորելու Եկեղեցու ու Հայրենիքի շուրջ՝ որպես ազգապահպանության երաշխիք:

ՀԵՀԵՄ-ում ծառայությունն ինձ համար եղավ այն դարբնոցը, որտեղ, որպես եկեղեցական, դրվեցին հիմերը իմ հետագա ծառայությունների: Եվ հենց այդ հիմերի շնորհիվ է, որ այսօր իմ ծառայությունն եմ բերում Հայոց Բանակում՝ նորից հայ երիտասարդների կողքին, որոնք իրենց կյանքի գնով պաշտպանում են մեր Սուրբ Հայրենիքն ու Եկեղեցին:

Ինձ համար մեծ օրհնություն և պատիվ էր Կենտրոնական գրասենյակի Տեսուչից ստանալ նման առաջարկ՝ կազմելու «Հայրապետական խոսքեր և պատգամներ» գրքույկը, որտեղ զետեղված պետք է լինեին Հայոց Հոր խոսքերն ու պատգամները, որոնք սխալված չեմ լինի եթե ասեմ, որ կենսական նշանակություն ունեն թե՛ երիտասարդների կայացման և թե՛ մեր Հայրենիքի և Եկեղեցու հզորացման ճանապարհին:

Հիշյալ պատգամներն ու հորդորները վերցված են Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում տարբեր տարիներին հրատարակված՝ Վեհափառ Հայրապետի եպիսկոպոսության և հայրապետության շրջանում խոսված քարոզներից, պատգամներից, Սրբատառ Կոնդակներից և շնորհավորական խոսքերից:

Ցանկանում եմ իմ որդիական շնորհակալությունը հայտնել ՀԵՀԵՄ Հոգևոր տեսուչ և Կենտրոնական գրասենյակի տնօրեն Հայր Թովմա Խաչատրյանին ՀԵՀԵՄ-ում ծառայությանս ընթացքին՝ որպես ավագ հոգևոր եղբայր, իր խորհուրդների և սույն հրատարակության պատրաստությունն ինձ վստահելու համար:

Շնորհավորելով Վեհափառ Հայրապետին՝ իր գահակալման 20-ամյակի առթիվ, հայտնում եմ որդիական շնորհակալությունս Հայոց Հոր մշտամնա օրհնության և, ինչպես գրքույկում կտեսնեք, հայրական հորդորների համար:

Սիրելի՛ երիտասարդ, հուսով եմ, որ Սուրբ Գրքի, «Երիտասարդի ազոթագրքի» կողքին քեզ հետ միշտ կունենաս սույն գրքույկը, որպես հարատև ուղենիշ քո կյանքի:

Բարեշնորհ
Սևակ սարկավազ Գրիգորյան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք

❖ Քրիստոսի խաղաղությունը, որը համակ սեր է, հույս և հավատ, աներեր վեճն է մարդկային կյանքի կայուն և համապարփակ խաղաղության, այն վեճը, որի վրա «Ողորմություն և ճշմարտություն պատահեսցին, արդարություն և խաղաղություն համբուրեսցին» (Սաղմոս 27 11):

«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46

❖ Քրիստոնեության երկհազարամյա պատմության ընթացքին խաղաղության Սերմնացանի բարի հունդերը միշտ չէ, որ ընկել են մարդկային հոգու և մտքի պարարտ ակոսներում, այլ ավելի հաճախ ավետարանական սերմնացանի առակի նման՝ չոր, տատասկոտ ու որոմնակալած անդաստաններում: Իսկ ավետարանական ճշմարտությունն այս է՝ «Զի որ եթե ի փշոց քաղեն թուզ և ոչ ի մորենվո խաղող»: Արդարև, թշնամանքից սիրո և արդարության պտուղներ չես կարող քաղել և ոչ էլ պատերազմի, խավարի ու արյան մեջ առաջընթաց ու զարգացում արձանագրել:

«Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 46

❖ Քրիստոնեությունը մեր ժողովրդի համար արտաքին զգեստավորում չէ, այլ մաշկի գույն, նկա-

րագիր, էություն, որ ծաղկող գրչով դրոշմվել է մագաղաթին և մատյաններ շնչավորել, աներկբա հավատով հայրենյաց մեր սուրբ հողին մարմնավորվել որպես խաչքար, վանք ու եկեղեցի: Աստվածաշնչյան է Հայաստանը, Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու գոյությամբ, մեր ժողովրդի անցյալ ու ներկա հիշատակներով, ավելի ևս՝ նորօրյա հավատի մեր վերագարթոնքով, որպես երաշխիք աստվածաշնչյան մեր հարատևության:

«Էջմիածին», 1999, Ե-2, 47-48 էջ

❖ Որպես քրիստոնյաներ, Քրիստոսի անունը կրողներ, մեր կրոնական ու բարոյական պարտքն է հետևել Քրիստոսի կյանքին, գործին ու Նրա Ավետարանին: Չի՛ կարելի լինել քրիստոնյա ու չխարազանել շարն ու անարգարը, չդատապարտել բիրտ ու բռնի ուժը, մահասփյուռ պատերազմը, որոնք «ոճիր են Աստծո դեմ, երկնքի դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկային վեհ ու ազնիվ երազանքների դեմ»:

«Էջմիածին», 1986, Գ-Դ, էջ 61

❖ Ապրել Քրիստոսով և Քրիստոսի համար, ահա այս է փրկարար ուղին մեր կյանքի, հիմքը, պայմանն ու երաշխիքը թե՛ որպես անհատ, և թե՛ որպես հավաքականութուն մեր հոգևոր աճի ու զորացման, նաև՝ մեր հայրենիքի առաջընթացի ու զարգացման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության ու լուսավոր գալիքի:

«Էջմիածին», 2017 թ., Դ, էջ 10

ԵԿԵՂԵՑԻ

Երանի՛ Եկեղեցի շինողաց...¹

❖ Եկեղեցին Բարձրյալի ներկայությունն է մեր կյանքում, ուր ամեն հավատավոր՝ աշխատավոր թե իշխանավոր, այր թե կին, երիտասարդ թե տարեց, խոնարհությամբ են մուտք գործում, իրենց հոգու հայցը բարձրացնում առ Աստված, գոհաբանություն մատուցում Տիրոջն Իր անգին պարգևների, Իր հայրական խնամքի և օրհնությունների համար:

«Էջմիածին», 2015, Ե, էջ 15

❖ Եկեղեցին սրբություն է պարգևում՝ իր նվիրական կամարների ներքո համախմբված հավատացյալների հոգիներից ներս հեղելով աստվածային կենարար շնորհները, առաջնորդելով Աստծո հետ աղոթական հաղորդակցության, Տիրոջ հետ մերձավորության:

«Էջմիածին», 2015, Ե, էջ 15-16

❖ Քրիստոսավանդ սպասավորության հետ մեր Եկեղեցու առաքելությունն է ազգային ինքնութ-
յան պահպանումը: Այս ծիրից ներս խնամքը պիտի
շարունակվի նոր սերնդի կրթության գործում, որ
Սահակ-Մեսրոպյան դպրոցը հավատքի, մայրենի

¹ Էջմիածին ամսագիր, 2 2005, էջ 11:

լեզվի ու հայրենյաց ավանդներով հար ապրի մեր ժողովրդի կյանքում:

«Էջմիածին», 2017, 2, էջ 8

❖ Փորձություններով ու նահատակություններով լեցուն իր պատմության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին մշտապես իրագործել է քրիստոնեական միության և եղբայրասիրության պատգամը՝ շեշտելով «միութիւն ի կարևորս և սէր յամենայնի» քրիստոնեական սկզբունքը:

«Էջմիածին», 2017 թ., Գ, էջ 12

❖ Եկեղեցին ամուր բերդն է մեր ազգային ինքնության պահպանության, ազգային նկարագրի կերտման ու ինքնագիտակցության ամրապնդման, ամուր բերդն է մեր հավատքի, քանզի ըստ տերունական առակի՝ սա Քրիստոսի վեմի վրա հաստատված այն տունն է, որն անսասան ու զորեղ է պահում այստեղ բնակվող իր զավակներին:

«Էջմիածին» 2015, Ե, էջ 16

❖ Հայրենիքում, թե նրանից հեռու, խաղաղության մեջ, թե՛ փորձությունների, ապահովության մեջ, թե՛ նեղությունների, բոլոր ժամանակներում հառնել են հայոց եկեղեցիները, խաչը պարզել երկինք, որ Աստծո շնորհը և օրհնությունը լուսավորեն Քրիստոսին հուսացողների կյանքը և ուղղորդեն դեպի փրկություն ու հավիտենական կյանք:

«Էջմիածին», 2010, Թ, էջ 11

❖ Եկեղեցու կենսունակության և գործության աղունքները բխում են անխորտակ վեմից քրիստոսապատվեր սիրո, որը միմյանց է շաղկապում ու միավորում Եկեղեցու յուրաքանչյուր զավակի, համայնքի յուրաքանչյուր անդամի սիրտը, կյանքն ու գործերը: ...Դժվարություններն ու մարտահրավերները հաղթահարելու ջանքերը շարունակ պիտի իրագործվեն միմյանց հանդեպ սիրո և ծառայության ոգով, որի վերաբերյալ մեր Տերը հանձնարարեց. «Ձեզնից ով կամենա մեծ լինել, թող լինի ձեր սպասավորը. և ձեզնից ով կամենա առաջին լինել, բոլորին ծառա թող լինի. որովհետև մարդու Որդին էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մարկ. Ժ. 43-45):

«Էջմիածին» 2014, Թ, էջ 13-14

❖ Հայ կրոնը, հայ եկեղեցին ոչ միայն հակադիր չէ ազգին, այլ նրա գոյության մեկ ուրույն ձևն է: Բավական չէ գոյություն ունենալ, պետք է գոյություն ունենալ սեփական անունով, սեփական արժանապատվությամբ՝ անկախ, ինքնուրույն, միայն ու միայն քեզ նման և ոչ ուրիշի:

«Էջմիածին» 2011 ժԱ, էջ 23

❖ Ճանաչենք մեզ որպես Հայ Եկեղեցի, որպեսզի կարողանանք ճիշտ ըմբռնել մեր առաքելությունը՝ իմաստը մեր կյանքի, որպեսզի անսայթաք լինի մեր ուզին և հավետ առաջնորդի դեպի Սուրբ Տաճարն Աստծո:

«Էջմիածին» 2001, Թ, էջ 18

❖ Եկեղեցին ծննդավայրն է հայ հոգու, մեր հոգևոր ազգային ինքնության աներեր սյունը, անառիկ ամրոցը ազգիս, մեր տիրության փարատողն ու երջանկության ճանապարհը և հույսի ապավենը: Եկեղեցին նաև մեր ազգային ամբողջականության հոգևոր մարմնացումն է, հոգևոր մեր Հայրենիքը, մեկ ու միասնական աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

«Էջմիածին» 2005, 2, էջ 10

❖ Հավատքի անսասան վեմ առաքելահավատ Հայոց Եկեղեցին հայ հոգու ծննդավայրն ու պատվարն է, փրկության տապանը, որ Ավետարանի լույսով և հայրենի ավանդներով սնում, նորոգում ու զորացնում է ազգային մեր կյանքը, կերտում միության մեր Տաճարը:

«Էջմիածին» 2001, Ը, էջ 17

❖ Մեր Սուրբ Եկեղեցին ամուր է հոգևոր կյանքի զորությամբ, քրիստոնեական ազգային արժեքների ամբողջ պարունակով, մեր ազգի զավակների միաբանությամբ, առ Հայրենին նախանձախնդրությամբ և հավատարմությամբ:

«Էջմիածին» 2011, Ե, էջ 15

❖ Եկեղեցին հավաքականությունն է հավատացյալ ժողովրդի՝ իբրև Քրիստոսի խորհրդական մարմին, ուր հավատքի վեմի վրա հիմնված միության մեջ ներկա է Տերը:

«Էջմիածին» 2011, Ե, էջ 14

❖ Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնեական սուրբ հավատով միասնական, ինքն իրեն Հայ Եկեղեցիով ճանաչող ու արտահայտող: Նայենք հայ կյանքի անդաստաններին: Քրիստոնեական համամարդկային արժեքներով, ազատության, արդարության, խաղաղության ձգտումներով է հանդերձավորված հայ ինքնությունը, որով հակառակ մահաշունչ փորձությունների, դարերի մեջ արարել է միշտ, ի զորու գտնվել հաղորդ լինելու և ներդրում բերելու մարդկային քաղաքակրթության առաջընթացին:

«Էջմիածին» 2001, Ա, էջ 8

ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾԻՆ

❖ Մայր Տաճարը հոգեղեն գեղեցկազարդ մարգարիտն է մեր հաւատքի անդաստանում, և ազգիս զավակաց սրտերը ի սփյուռս աշխարհի կապված են այս անգին գանձին:

*Հայրապետական Սրբատառ Կոնդակից՝
Մայր Տաճարի վերանորոգության համար
համապատասխան դրամահավաքի կապմակերպման
Յունիս 2019*

❖ Արդարև, մեր ազգային-հոգևոր կեանքում Սուրբ Էջմիածինը դարձել է աստուածահիմն ակունքը ամենայն օրհնությունների, առատաբուխ աղբյուրը հոգևոր բարեզարդությունների, բաշխողը Սուրբ Հոգու շնորհաց առհավատչյա՝ սրբալույս մյուռոնի, քաջալերողն ու նորոգողը հայոց հավատքի: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հրաշակերտ իր տաճարով եղել է և միշտ կլինի ազգիս՝ Միածնի էջքով պսակյալ հոգևոր սուրբ կենտրոնը, սերնդե սերունդ փառքն ու պարծանքը, նվիրագործված ու փայփայված հայոց Բեթղեհեմը:

*Հայրապետական Սրբատառ Կոնդակից՝
Մայր Տաճարի վերանորոգության համար
համապատասխան դրամահավաքի կապմակերպման
Յունիս 2019*

❖ Սուրբ էջմիածնով միշտ պիտի ամուր պահենք մեր ուխտը առ Աստված և մնանք համախմբված հայրենիքի, ազգի և Եկեղեցու սիրով ու մեր նվիրական արժեքներով:

Հայրապետական Սրբառատ Կոնդակից՝
Մայր Տաճարի վերանորոգության համար
համապային դրամահավաքի կապնակերպման
Հունիս 2019

❖ Արդարև, առաքելություն է Սուրբ էջմիածինը, ինչպես բնորոշել են մեր Հայրապետները. խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք առաջնորդող առաքելություն, ամեն հայի հոգում Աստծո էջքը պատկերագրող և այս արժեքով համայն հայոց միավորող առաքելություն:

«Էջմիածին» 2001, Թ, էջ 60-61

❖ Սուրբ էջմիածինը Քրիստոսի Ավետարանն է, որ տրվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին: Սուրբ էջմիածնի լույսն ամենուր է և ճառագում է մեր ժողովրդի հոգիներից ներս՝ կապելով նրանց մեր սուրբ Հայրենիքին:

«Քրիստոնյա Հայաստան», 2019, հունիս Բ,
թիվ 12 (536), էջ 6

ՀԱՅՐԵՆԻՔ

Ժողովուրդներն ապրում ու գոյատևում են իրենց հայրենիքով, իսկ հայրենիքը ծաղկում է իր զավակների նվիրումով ու զոհողություններով¹

❖ «Ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է» (Թ Կորնթ. 3.17),- ասում է առաքյալը. ազատություն՝ շարիքից, կեղծիքից, անարդարությունից: Հոգևոր այս ազատությունը կամրապնդի հիմքերը մեր պետության, կաաշտպանի և նպաստ կբերի հայրենի մեր երկրին:

«Էջմիածին» 2011, Թ, էջ 143

❖ Խաղաղ ու ապահով ապրելու ձգտումով ազգիս զավակները, ապավինած Աստծուն, ելան պաշտպանելու մեր նվիրական հայրենիքը և մեր հայրերի ստեղծած ժառանգությունը: Հայրենասեր սրտերի բոցից մեր բանակը ծնունդ առավ ինչպես օր առ օր մեծացող Սասունցի Դավիթ, ամրապնդվեց ու զորացավ մարտերում՝ իր հաղթանակներով զորացնելով նաև խաղաղ կյանքի հույսն ու լավատեսությունը մեր ժողովրդի:

«Էջմիածին» 2017, Ա, էջ 8

¹ «Էջմիածին ամսագիր», Թ, 2011, էջ 6:

❖ Միշտ հիշենք՝ միայն համախմբվածությունյամբ է հնարավոր իրագործել հզոր հայրենիքի մեր տեսիլքը, միայն օրինահարգությունյամբ, արդարասիրությունյամբ, ծառայանվիրումով, հանձնառություններով ու զոհողություններով կարող ենք ծաղկեցնել մեր կյանքը և ամուր ու հաստատուն պահել մեր պետականությունը:

«Էջմիածին» 2016, Թ, էջ 15

❖ Մենք իրավունք չունենք տկար լինելու, մեր կարողություններն ու հնարավորությունները վատնելու, այլ՝ համախմբված, հետևողական ու անհահանջ շարունակելու պայքարը մեր ժողովրդի արդարության հաղթանակի համար:

«Էջմիածին» 2011, Թ, էջ 7

❖ Հանուն մեր պատմության, մեր ներկայի, մեր պապերի ու հայրերի, մեր որդիների ու սերունդների՝ կերտենք մեր երկիրը հզոր ու բարգավաճող, մեր գալիքը՝ խաղաղ ու երջանիկ:

«Էջմիածին» 2011, Թ, էջ 5

❖ Հայրենիքը գորանում և Եկեղեցին փառավորվում ու պայծառակերպվում է, երբ աստվածահաճո կյանքով է ապրում ողջ ազգը, նրա բոլոր զավակները:

«Էջմիածին» 2013, Ը, էջ 149

❖ Մեր Հայրենիքը ապահով, մեր սահմանները պաշտպանված, պետական-հասարակական մեր անդաստանը խաղաղության մեջ պահպանելու և

համայն մեր ժողովրդի կյանքը շենացնելու պատասխանատվությունը ամենքինս է:

«Էջմիածին», 2014, ԺԲ, էջ 9

❖ Անկախության պատմությունը նորագույն մեր տարեգրության հրաշապատումն է՝ հյուսված մեր ժողովրդի արիասիրտ զավակների հավատքով ու տեսիլքով: Անկախությունը Աստծո պարգևն է ի դիմաց այն զրկանքների ու կորուստների, որոնք մենք կրեցինք Ցեղասպանության և խորհրդային աստվածամբրժուկության հալածանքների տարիներին:

«Էջմիածին» 2012, Թ, էջ 9

❖ Նոր մարդիկ լինենք՝ նոր երկիր ու նոր կյանք կառուցելու համար: Ինչպես առաքյալները Տիրոջ Հարության ավետիսով փոխակերպված ու զորացած՝ աշխարհը վերափոխեցին, մենք էլ մշտապես աճելով ու զորանալով հավատքի մեջ, պիտի դիմագրավենք ժամանակի մարտահրավերներին և վերափոխենք մեր իրականությունը: Մեր պատմության նոր այգաբացն է՝ լեցուն մեր անկախացյալ երկրի և ազգային կյանքի զարթոնքի հույսերով:

«Էջմիածին» 2012, Դ, էջ 4

❖ Մեր ափերի մեջ պիտի զորանա մեր Հայրենին ու դառնա երկիրը իրականացած մեր հույսերի: Ամեն բարի լույսի հետ օրհնենք սկիզբ առնող ամեն օրը ազատ մեր կյանքի, օրհնենք հավատով ու հավատարմությամբ և մեր զարթնյալ հոգու վստահությամբ

կառուցենք հայոց բարօր ներկան ու գալիքի տեսիլ-
քը, որ լույս է առնում Լուսավորչի անմար կանթեղից:
«Էջմիածին» 2003, Գ-Դ, էջ 4

❖ Մեր ժողովուրդը չի տեսել Քրիստոսի դա-
տարկ գերեզմանը, բայց Քրիստոսի հետ բազմիցս
տեսել է իր համար փորված գերեզմանների դատար-
կությունը և Քրիստոսի հետ հաղթության փառքի
պսակներ հյուսել: Հայ մարդը չի կարող չհավատալ
Քրիստոսի հարությանը:

«Էջմիածին» 2005, Բ-Գ, էջ 4

ԲԱՆԱԿ

Արդար է մեր պայքարը, սիրելիներ:

❖ Բանակը սյուներից մեկն է մեր պետականության: Ուժեղ բանակը գրավականն է մեր Հայրենիքի խաղաղ, ապահով ու անվտանգ կյանքի, մեր երկրի զարգացման և ազգի հարատևության:

«Էջմիածին» 2012, Ա, էջ 3

❖ Բանակի իրական հզորությունը հայրենասեր, արդարամիտ ու ճշմարտասեր հոգու մեջ է, հավատքով ու անձնդիր ծառայության մեջ. «Եւ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին, մեր հավատքը», - ասում է առաքյալը:

«Էջմիածին» 2012, Ա, էջ 4

❖ Հայ զինվորի անվեհեր ոգին քաջալերություն է բաշխում մեր ողջ ժողովրդին՝ առաջնորդելով ամենքիս ամբողջական նվիրումով, նախանձախնդրությամբ ու միմյանց նկատմամբ սիրով ծառայելու մեր Հայրենիքին և իրագործելու մեր Երկրի պայծառ գալիքի լուսավոր տեսիլքներն ու հույսերը:

«Էջմիածին» 2016, Ա, էջ 15

❖ Մաղթում ենք, որ մեր բանակը միշտ լինի հայրենասիրության դարբնոց, աննկուն պաշտպանը մեր ժողովրդի արդար իրավունքների ու ամեն առաքինության օրինակ, և մեր կեանքում միշտ ամուր լինեն հույսն ու քաջալերությունը և հավատքը աներկբա, որ՝

«Տերն իր ժողովրդին զորություն պիտի տա և իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն պարգևելով»:

«Էջմիածին» 2017, Ա, էջ 9

❖ Մեր պատմության էջերում Հայոց բանակը եղել է ոչ միայն զենքի ու ռազմարվեստի, մարտական հմտության, ուժի խորհրդանիշ, այլ նաև ոգեկերտումի ու առաքինությանց, քրիստոնեական նվիրական արժեքների և հերոսությանց խտացում:

«Էջմիածին» 2017, Թ, էջ 10

❖ Նորանկախ մեր պետականության ամենաթանկ ու նվիրական ձեռքբերումն է Հայոց բանակի կազմավորումը, որն արդյունքն է քաջարի մեր զավակների պայքարի և առ Հայրենին նվիրումի ու սիրո:

«Էջմիածին» 2016, Ա, էջ 15

❖ Բանակի տոնը պատգամ է մեր ժողովրդին տոգորվելու հաղթանակների վստահությամբ, ջանք ու ավանդ բերելու Հայաստանի ու Արցախի շենացմանն ու զարգացմանը և իրագործելու առաջընթացի ու ազգային զարթոնքի մեր տեսիլքները:

«Էջմիածին» 2019, Ա, էջ 15

❖ Հայոց բանակի տոնը մեր ողջ ժողովրդի տոնն է՝ յուրաքանչյուր ընտանիքի և յուրաքանչյուր անձի: Բանակի տոնը նշելով՝ մեր երախտիքն ենք բերում այն նվիրյալ անձանց, որոնք բացառիկ ավանդ են ներդրել Արցախյան հերոսամարտի հաղթանակի, հայրենիքի պաշտպանության և հայոց բանակի կայացման ու զորացման գործում:

«Էջմիածին» 2020, Ա, էջ 11

ԸՆՏԱՆԻՔ

Հայ ընտանիքը փոքրիկ Հայրենիք է, ուր ապրում են նախնյաց հիշատակները, և անկորուստ պահպանվում հայրենի ժառանգությունը, ուր երջանիկ է ու հավերժում է Հայ Հոգին:

❖ Այսօր անհրաժեշտ է առավել զորացնել ընտանիքների կապը Եկեղեցու հետ, հոգևոր-դաստիարակչական աշխատանք տանել ընտանիք կազմելու որոշում կայացրած հայորդյաց հետ, որպեսզի ամուսնացյալներն ամենայն լրջությամբ գիտակցեն Բարձրյալի օրհնությամբ մշտական միության, անշահախնդիր սիրո, միմյանց սատարումի և հոգատարության փոխադարձ հանձնառությունը, որ հաստատվում է առ Աստված ուխտադրությամբ:

ՀԵՅԵՄ հավաքին հղված պատգամից
Մոսկվա, Նոյեմբեր 2018

❖ Ընտանիքում են խնամվում և զորանում հավատքը, հույսն ու սերը, որոնցով ընտանեկան ազատ, ջերմ ու հարազատ միջավայրում մարդը աճում ու զարգանում է դեպի բարին ու կատարյալը:

«Էջմիածին» 2010, Ա, էջ 4

❖ Ընտանիքը կոչված է շարունակելու Աստծո արարչագործությունը և պաշտպանելու մարդկային հոգու աստվածապատկեր նկարագիրը: Իր այս կոչումով ընտանիքը սուրբ է, սնուցողը, կրողն ու փո-

խանցողը աստվածադիր պատվիրանների, որոնց վրա հաստատվում է կյանքը Տերունապարզ և կառուցվում են հարաբերությունները դեպի մերձավորը, առ մարդը և առ Աստված:

«Էշմիածին» 2010, Ա, էջ 4

❖ Հայրենի երկրում հառնած են ընտանիքի ամրությունն ու բարոյական նկարագրին սպառնացող օտար բարքերի ու գաղափարախոսությունների Հայաստան Ներթափանցման մարտահրավերները, ինչպես և գործազրկության, երեխաների դաստիարակության ու ամուսինների փոխհարաբերությունների մեջ դժվարություններ առաջացնող արտագնա աշխատանքի ու սոցիալական հիմնախնդիրները: Սփյուռքում անհանգստացնող է ուժացման վտանգը, մայրենի լեզվի նվազ իմացությունը, երբեմն նաև աստիճանաբար հեռացումը ազգային ավանդույթյուններից այն ընտանիքներում, որոնք ստեղծվել են խառն ամուսնությամբ, հրամայական է մշտապես ուշադրության կենտրոնում պահել նոր սերնդի հայեցի և քրիստոնեական դաստիարակությունը:

ՀԵՅԵՄ հավաքին հղված պատգամից
Մոսկվա Նոյեմբեր 2018

❖ Հայրենիքի արժանավոր զավակ դաստիարակելու, պետության քաղաքացի կրթելու առաջին հանգրվանը ընտանիքն է: Ընտանիքում է կերտվում ազգի ապագան, դրվում հիմերը հզոր պետության: Ընտանիքի գորովաշատ միջավայրում են մանուկ հոգիներում պտղաբերում Աստծո խոսքի սերմանված

հունդերը, սնուցվում հոգևոր-բարոյական արժեքները, բարին ընտրելու աներկյուղ ոգին: Ընտանիքում մատուցված օրինակով կրթվում են միմյանց հանդեպ սերը, վստահությունը և հոգատարությունը: Արդ, նախանձախնդիր մնանք նվիրականությանն ու ամրությունը ընտանիքի:

«Էջմիածին» 2019, Ա, էջ 10-11

❖ Անխաթար պահպանենք աստվածահաստ ընտանիք հասկացությունը, նրա սրբությունը, ազգային ավանդույթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգևոր ու ազգային կյանքը և մնանք մշտապես Տիրոջ որդեգրության շնորհի մեջ՝ որպես հավատավոր մեկ ընտանիք, որպես Աստծո սեփական ժողովուրդ:

«Էջմիածին» 2019, Ա, էջ 11

❖ Արդարև, ընտանիքն է առաջին սնուցողը հավատքի, մայրենի լեզվի, նվիրական այն բոլոր արժեքների, որոնց վրա խարսխված է հայ քրիստոնեական ինքնությունը:

«Էջմիածին», 2011, Ե, էջ 17

❖ Ընտանիքի նախօրինակը Եկեղեցու և Քրիստոսի հարաբերություններն են: Ուստի, միայն սիրո լրումը, որ առկա է Սուրբ Եկեղեցու և մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջև, կատարելյալ ամրության մեջ պիտի պահի հայկական մեր ընտանիքները՝ դառնալով ամուր պատվար ու միջնաբերդ ընտանիքի ամրության:

Երիտասարդության տարվա առթիվ Մայր Աթոռ ժամանած հայորդիներին ասված պատգամից, Յուլիս 2018

ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱԼԸ

**Ազգը գոյություն ունի այնքան ժամանակ,
քանի դեռ տեսիլք ունի և պայքարում է հանուն դրա
իրագործման¹**

❖ *Զորեղ պահեցեք ոգին աստվածսիրության, ազգանվիրումի ու հայրենասիրության, ոգին արիության ու աննկուն հավատքի, որպեսզի ձեր նվիրյալ ջանքերով ազգին ու եկեղեցուն հավատարիմ նոր սերունդ մեծանա՝ շարունակելով շեն ու ծաղկուն պահել թեմական կյանքը նորանոր հաջողություններով:*
«Էջմիածին», 2011, Ե, էջ 15

❖ *Ծանրակշիռ ջանքեր պահանջող ուղի պիտի անցնենք՝ կերտելու համար մեր ժողովրդի բարօր կյանքը, ապահովելու խաղաղությունը մեր սահմաններում, պաշտպանելու մեր ժողովրդի իրավունքները և իրագործելու համար ազգային մեր իդեալները: ... Այս ճանապարհին հարկ է հավատարմորեն հետևել Սուրբ Ներսես Շնորհալու պատգամին. «Պահպանենք միությունը կարևոր գործերում, ազատությունը՝ երկրորդականներում և սերը՝ ամեն ինչում»:*

«Էջմիածին», 2017, Ե, էջ 12

¹ Էջմիածին ամսագիր, Դ 2016, էջ 15:

❖ Մեր կյանքի ընթացքը, մեր կենսակերպը մեզ ոչ թե պիտի ջլատի, պառակտի, այլ միավորի և դարձնի համախումբ՝ դիմագրավելու համար մեր կյանքի մարտահրավերներն ու փորձությունները և լավատեսությամբ իրականություն դարձնելու ազգային մեր տեսիլքները: Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք...

«Էջմիածին», 2017, Դ, էջ 11

❖ Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հավատը, որ Քրիստոս հարություն է առել, անհուսությունը փոխում է հույսի, տկարությունը՝ ուժի, անտարբերությունը՝ նախանձախնդրության, արձաթափությունը՝ բարեգործության, ծառայությանն ու աշխատանքին միախառնում է նվիրումի ու հանձնառության ոգին: Այս փոխակերպությանն ենք կոչված, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կյանքը և հաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրության և առաջընթացի պայքարում:

«Էջմիածին», 2017, Դ, էջ 11

❖ Մեր կրած դառնությունների, զրկանքների ու շարշարանքների, մեր թանկ զոհողությունների դիմաց՝ մեր Սուրբ հոգում ընդմիշտ շարունակելու է ծաղկել հայոց հավատքը և այդ հավատքով շաղախյալ հայ կյանքը: Մեր վանքերում նորանոր ընտանիքներ են օրհնվելու, և հայ մանուկներ են մկրտվելու մեր եկեղեցիների սուրբ ավազաններում՝

նոր շունչ բերելով մեր կյանքին, շունչն ու ոգին վառ հավատքի, պայծառ մտքի, արարումի ու առաջադիմության:

«Էջմիածին», 2016, Թ, Էջ 11

❖ Մեր ազգային և եկեղեցական անդաստանի շենացման համար ծառայենք միմյանց, ծառայենք մեր Հայրենիքին, որի օրհնյալ կյանքը պիտի կերտենք, ծառայենք մեր ազգին, որ բազում հույսեր ունի իրագործելու: Օգնական լինենք նեղյալներին և կարոտյալներին: Միմյանց հանդեպ սերը, բարի նպատակն ու գործը Աստված անտես չի անում:

«Բրիտոնյա Հայաստան», 2017, Հունվար Ա, Էջ 1

❖ Հավատքն առ Աստված, սերն առ ազգս հայոց և ծառայությունը Հայրենիքին ու Եկեղեցուն՝ այս է ուխտը մեր հայրերի:

«Էջմիածին», 2011, Թ, Էջ 143

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ

Յուրաքանչյուր առողջ հասարակության շարժիչ ուժը երիտասարդությունն է:

Հարց - Մեզ՝ հայ երիտասարդներին, ինչ կթելադրեք, ինչպե՞ս մեր հավատքը պորեղ պահենք և պորացնենք մեր եկեղեցին:

Վեհափառ Հայրապետ - Աղոթեք, կարդացեք Ավետարան, հաղորդակցվեք մեր սրբություններին, մեր սրբազան ժառանգությանը, ըմպեք այդ արժեքներից և հավատքը ձեր գորեղ կլինի: Դուք ձեզ երջանիկ կզգաք այդ հավատքի մեջ:

Հանդիպում ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմի երիտասարդների հետ, ԱՄՆ
Նոյեմբեր 2017

❖ «Օրհնեցե՛ք Տիրոջը, երիտասարդներ, օրհնեցե՛ք անունը Տիրոջ»: Թող սաղմոսի այս կոչը արձագանքի ձեզանում, որպեսզի աստվածսիրությամբ նաև հաստատուն լինեք բարեպաշտության, ազգասիրության ու հայրենասիրության մեջ: Սիրելի զավակներ Մեր, Հայոց Հայրապետիս հորդորն ու պատգամն է՝ ձեզ, որ անշեջ պահեք հավատքը և անսասան՝ հայրենասիրությունը՝ ձեր հոգիներում, լինեք առաքյալներ հայության մեջ՝ ձեր ոգեշունչ, ազգօգուտ գործունեությամբ խնամելով երկիր հայրենին,

հավելելով սերն ու համերաշխությունը համազգային կյանքում: Ապրեք այնպես, որ մեր ժողովուրդը միշտ հպարտ լինի ձեզանով, և ձեր աշխատասիրությունը, հայրենանվեր ընթացքը և հավատքի բեղուն գործերը լուսառատ նոր հորիզոններ բացեն գալիք սերունդների համար:

«Էջմիածին», 2011, Թ, էջ 144

❖ Մեր Եկեղեցին զորավոր կլինի այնքանով, որքանով մեր երիտասարդությունը զգա Եկեղեցու ներկայությունն իր հոգուց ներս, երբ զգա, որ Եկեղեցու առաքելությունը նույնացած է իրենց կյանքի առաքելության հետ:

«Էջմիածին», 2004, Բ-Գ, էջ 171

❖ Կարևոր է երիտասարդների ներկայությունը Եկեղեցում. նրանք, հաղորդ դառնալով եկեղեցական կյանքին ու առաքելությանը, պիտի դառնան առաքյալները նոր ժամանակների, մեր հավատքի տարածման, ազգային սրբությունների, ավանդույթների և արժեքների քարոզչության:

«Էջմիածին», 2011, Է, էջ 146

❖ Եկեղեցու օրհնության ներքո գտնվող մարդիկ առանձնահատուկ շնորհի ներքո են: Նրանք Աստծո օրհնության, սիրո ու ողորմության ներքո են, և Աստծո Աջը միշտ նրանց հովանի է, զորակից և առաջնորդող: ...Մենք անշուշտ նախանձախնդիր ենք, որ մեր ժողովրդի զավակներն ամենքը՝ մանուկ, երիտասարդ, պատանի, տարեց, համախմբված լի-

նեն մեր Եկեղեցու օրհնության ներքո, որովհետև լինել Աստծո հետ, Աստծով ապրել նշանակում է լինել զորեղ և կարող հանձնառությունների, բարի արարքների և հավատքի գործերի:

«Էջմիածին», 2011, Է, էջ 146

❖ Ճշմարիտ քրիստոնյան գիտի, որ իր յուրաքանչյուր օրը պարգև է իր Արարչից, և որ այդ պարգևն առավել պայծառագարդվում է առ Աստված հավատքից ճառագող սիրով, հավատավոր գործերով:

«Բրիտանյա Հայաստան», 2018, Հունիս Ա,
թիվ 13 (513), էջ 5

❖ 100-ամյա հերոսական պատմություն ունեցող Սարդարապատից մինչև օրս հայ երիտասարդի անմնացորդ նվիրումով է նաև, որ մեր ազգը ձեռք բերումներ է կերտել, ազգային գիտակցությունն ու ոգին բարձրացրել: Երիտասարդությունն ամուր է պահել հարազատ մեր բնօրրանը, պաշտպանել Մայր հայրենիքը, ուր դարեր ի վեր, ավետարանական խոսքին համահունչ, մեր նախնիներն ամբարել են բյուրավոր հոգևոր գանձեր՝ իրենց սրտերը նորոգելով հավատքի ու սիրո գործերով:

«Բրիտանյա Հայաստան», 2018, Հունիս Ա,
թիվ 13 (513), էջ 4-5

❖ Դուք՝ երիտասարդներդ, ո՛չ միայն մեր ազգի ու եկեղեցու ապագան եք, այլ նաև ներկայի այն զորավոր ներուժը, որի միջոցով հայրենական և հո-

գևոր մեր կյանքում անհնարինը դառնում է հնարավոր, և արձանագրվում են նորանոր ձեռքբերումներ ու հաղթանակներ ազգային ու եկեղեցական մեր կյանքում:

«Դեպի Սուրբ Էջմիածին, դեպի Սրբապան Արցախ»
համահայկական երիտասարդական ուխտագնացության
հավաքի բացման ժամանակ սաված խոսքից
Հուլիս 2019

❖ Այսօր էլ բազում են խնդիրները, որ ծառայած են մեր ազգի առջեւ Հայաստանում եւ Սփյուռքում: Սիրելիներ, միասնական համախմբող ոգին, որ առկա է ձեր մեջ, պիտի դառնա թթիվոր համազգային մեր կյանքի զարթոնքի:

«Զրիստոնյա Հայաստան», 2018, Հուլիս Ա,
թիվ 13 (513), էջ 5

❖ Սիրելիներ, այսօր մեր երկիրը կարիքն ունի իր սիրասուն զավակների հոգածության, որպեսզի շենանա, հզորանա և բարգավաճի: Յուրաքանչյուր առողջ հասարակության շարժիչ ուժը նաև երիտասարդությունն է՝ իր անսպառ աշխատասիրությամբ, մտքի թռիչքով, նախաձեռնությամբ, նվիրումով և լավատեսությամբ: Այսօրվա երիտասարդը մեր վաղվա պետական գործիչը, գիտնականը, մանկավարժը, բժիշկը, զինվորականն ու հոգևորականն է, որոնց ձեռքերում են գտնվում դեռևս երիտասարդ մեր Հայրենիքի վաղվա առաջընթացն ու նվաճումները:

«Էջմիածին», 2011, Թ, էջ 143

❖ Մեր ընտանիքներում, մեր եկեղեցիներում, ազգային ու կրթական մեր հաստատություններում կարող պիտի լինենք կերտել Աստծո, Ազգի, Հայրենիքի ու Եկեղեցու առջև պատասխանատվություն կրող երիտասարդություն:

«Էջմիածին», 2011, Թ, 7

❖ Այսօր վտանգի առջև է մեր երիտասարդությունը, այդ վտանգն անհավատությունն է, անտարբերությունը հավատքի նկատմամբ, այդ վտանգը զվարճանքի և հաճույքի, Քրիստոսի պատվիրանների վրա շխարսխված կյանքի հրապույրներն են, դրսից ներթափանցող նոր արժեքային ընկալումներն են, որոնք գալիս են մեր Եկեղեցու զավակներին հեռացնելու իրենց հայրերի սուրբ հավատքից ու հայրենական արժեքների ընկալումից:

«Էջմիածին», 2004, Բ-Գ, 171

ԳԻՐ, ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

❖ Գիրքը մեր հավատի անբաժան մասն է, անբաժան մասն է առ Հայրենին մեր նվիրումի ու սիրո, ճանաչողության ու արարումի ոգու, որը Ավետարանի լույսով բացվեց ու փթթեց ու պտուղներ տվեց անմահ: «Էջմիածին», 2004, Թ-Ժ, Էջ 10

❖ Հայ մշակույթը, որ սնվել է Ավետարանից, Քրիստոսի լույս պատվիրաններից ու պատգամներից, միաժամանակ դառնում է սնուցիչ հայ հավատավոր հոգու համար, դառնում է ակունք, աղբյուր հայորդու պապակ հոգու համար՝ վերստին հոգևորով զորացնելու իր անձը, հոգևորով ամրացնելու իր հոգին: «Էջմիածին», 2004, Թ-Ժ, Էջ 29

❖ Բարիք է ուսումը, գիտելիքն ու կրթությունը և գովելի առաքինությունն է այն՝ մարդկանց, կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը: Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ՝ գիրն ու դպրությունը եղել են նաև փրկության ուղի՝ հայ և քրիստոնյա մնալու, ապրելու և վերածնվելու: «Էջմիածին», 2005, Թ, Էջ 13

❖ Ուսման ու կրթության մեջ ձեռքբերումները լավագույն հաղթանակներն են մեր երկրի ու ժողովրդի ճանապարհին դեպի բարգավաճ ու բարօր կյանք, դեպի մեր բոլոր իղձերի իրականացում: «Էջմիածին», 2006, Թ, Էջ 34

❖ Չկա ավելի երախտալից ու շնորհակալ գործ, քան մեր ապագայի հուսալի տեսլականի իրագործումը՝ ի դեմս մեր մատաղ սերնդի արժանավայել կրթության:

«Էջմիածին», 2017, Թ, Էջ 21

❖ Հայրենաշինության, ազգային ոգու մշտանորոգման և պահպանման լավագույն գրավականն են կրթական կենտրոններն ու դպրոցները:

«Էջմիածին», 2017, Թ, Էջ 21

❖ Կրթությունն ու իմացությունը Աստուծոց տրված բարիք են, որպեսզի մարդը ճանաչելով իր Արարչին ու աշխարհը՝ ապահով ու երջանիկ դարձնի իր կյանքի ընթացքը:

«Քրիստոնյա Հայաստան», 2016,
Սեպտեմբեր Ա, թիվ 17 (469), էջ 1

❖ Մեր ժողովուրդը բոլոր ժամանակներում առանձնահատուկ կարևորություն է ընծայել գիտելիքին ու դպրությանը՝ Աստվածապարգև հայոց այբուբենի յուրաքանչյուր տառը դիտարկելով հայոց ինքնության պահպանության կոչված զինվոր և դպրոցը՝ որպես ազգի հարատևման անխորտակելի ամրոց:

«Քրիստոնյա Հայաստան», 2019,
Սեպտեմբեր Ա, Թիվ 17 (541), էջ 1

❖ Քրիստոնեական դաստիարակությունն ու հայեցի կրթությունը, որը խնամեց մեր Եկեղեցին, սյուններն են մեր ժողովրդի հարատևության ու առաջընթացի:

«Էջմիածին», 2017, Թ, էջ 19

Բովանդակություն

Երկու խոսք	5
Կազմողի կողմից	7
Քրիստոնեություն	11
Եկեղեցի	13
Սուրբ Էջմիածին	18
Հայրենիք	20
Բանակ	24
Ընտանիք	26
Ազգային կյանք	29
Հայ Երիտասարդին	32
Գիր, դպրություն, կրթություն	37

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ
Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց

«ՄԵՆՔ ԶՐԻԱՏՈՍԻԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՆՔ»

*Հայրապետական խոսքեր և պատգամներ հայ
երիտասարդին
Կազմող՝ Սևակ սրկ. Գրիգորյան
Խմբագիր՝ Տ. Թովմա վրդ. Խաչատրյան*

ՀԵՀԵՄ Կենտրոնական գրասենյակ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ - 2020

Հրատարակչական բաժնի
տնօրեն՝

Տ. Արարատ քահանա Պողոսյան

Հրատարակչական էտրիբրդի
անդամներ՝

Տ. Մկրտիչ եպս. Պոռչյան,
Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան,
Տ. Ասողիկ աբղ. Կարապետյան,
Տ. Արարատ քին. Պողոսյան,
Տ. Գաբրիել քին. Վարդանյան,
Գևորգ Տեր-Վարդանյան,
Կարեն Մաթևոսյան

Էջադրումը՝

Ղևոնդ ավ. քահանա Մայիլյանի

ISBN 978-9939-59-250-3



9 789939 592503



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ